

«Բարձր Առաջնայնության Հաշիվ»

Ծառայության Մատուցման Պայմանագրի Ձև

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել անժամկետ **«Բարձր Առաջնայնության Հաշիվ»** (այսուհետ **Հաշիվ**) ծառայություն www.pages.am վեբ-կայքում (այսուհետ **Կայք**), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար: Նշված ծառայության ակտիվացումը ենթադրում է 1.2 կետում նշված բաժնում (բաժիններում) որոնման արդյունքներում Պատվիրատուի «Արտոնյալ Հաշիվ» ունեցող էջի առաջնային տեղ ցուցակի (ցուցակների) վերին հինգ տողերում: Վերին 5 տողերի առաջնայնությունը որոշվում է ըստ Հաշիվ ունեցող կազմակերպությունների անվանումների այբբենական կարգի:
- 1.2 **(Նշվում է Բաժինը, Ենթաբաժինը)**
- 1.3 Ծառայությունը մատուցված է համարվում Հաշվի ակտիվացումից անմիջապես հետո և կարող է ապահովված լինել միայն Պատվիրատուի լուծարման, գործունեության կասեցման, «Արտոնյալ Հաշիվ» ծառայության դադարեցման կամ մեկ այլ պատճառով՝ Պատվիրատուի գրավոր պահանջի դեպքում:

2. Պայմանագրի գինը, ժամկետները և կատարումը

- 2.1 Պայմանագիրը գործում է **մեկ (2,3)** տարի ժամանակահատվածով:
- 2.2 **(Նշվում է Ժամանակահատվածը)**
- 2.3 Ծառայության մատուցման տարեկան գինը կազմում է ըստ Պայմանագրում նշված բաժինների (կետ 1.2) և ժամկետների (կետ 2.2)՝ հիմնական Բաժիններում **30 000 ՀՀ դրամ**, իսկ Ենթաբաժիններում **12 000 - 18 000 ՀՀ դրամ** (ներառյալ ԱԱՀ):
- 2.4 Ծառայությունների մատուցման գումարը պետք է վճարել պայմանագրի ստորագրումից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը կակտիվացնի Հաշիվը (Հաշիվները):
- 2.5 2.3 կետի լրիվ կատարումից հետո ծառայությունը համարվում է մատուցված, որից հետո Կատարողը Պատվիրատուին կտրամադրի ծառայությունների կատարման Հարկային հաշիվ, ինչը չի դադարեցնի Կատարողի կողմից պարտավորությունների իրականացումը Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:

3. Կատարողի պարտավորությունները

- 3.1 Կատարողը պարտավորվում է ապահովել Կայքի անխափան գործունեություն և անվտանգություն, ինչպես նաև կատարել դրա գործունեության հետ կապված բոլոր դրամական ծախսերը:
- 3.2 Կատարողը պարտավորվում է Կայքում որոնման արդյունքներում բարձր առաջնայնության ապահովում 1.2 կետում նշված բաժիններում Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:
- 3.3 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին (ներառյալ համաձայնությամբ) ներկայացնել նոր պայմանագրի կնքման առաջարկ, սույն Պայմանագրի ավարտից 10 օր առաջ: Նոր պայմանագրի առաջակը Պատվիրատուն կստանա ավտոմատ ուղարկվող էլեկտրոնային նամակով՝ Պայմանագրի ավարտից 1 ամիս առաջ: Գնային քաղաքականությունը հաջորդ պայմանագրի կնքման ժամանակ կարող է փոփոխված լինել:

4. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

- 4.1 Պայմանագիրը կարող է լուծվել Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ գրավոր պահանջով ցանկացած պահին: Այդ դեպքում Կատարողը ոչ մի նյութական կամ այլ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի առաջ:

5. Այլ Դրույթներ

- 1.1 Անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով (Ֆորս-Մաժոր)՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ամբողջությամբ կամ ժամանակավորապես անհնարինության դեպքում, կողմերն ազատվում են պատասխանատվությունից: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլ անկանխատեսելի իրավիճակները, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացումը: Այս կետը վերաբերում է Երևան քաղաքին և Հայաստանին («Կամֆի» ՍՊԸ-ի գործունեության մասով) և հոսթինքի տրամադրման մասով՝ ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում գրանցված Namecheap LLC-ի սերվերի տարածաշրջանին:
- 5.1 Պայմանագրով չկարգավորվող իրավահարաբերությունները կամ ծագած վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով, դատական կարգով կամ ՀՀ օրենսդրությամբ ընդունված այլ ձևերով:
- 5.2 Կատարողը ոչ մի պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից երրորդ կողմին հասցրած որևէ վնասի համար, ինչը կարող է առաջանալ նրա կողմից էջի օգտագործման կամ հիմնական գործունեության ծավալման արդյունքում:
- 5.3 Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

Պայմանագրերը կնքվում են հետևյալ տարբերակներով

- Առցանց՝ էլեկտրոնային ստորագրության միջոցով (ID Card)
- Էլեկտրոնային փոստի միջոցով՝ սկանավորման տարբերակով
- Ավանդական ճանապարհով